

Դ.Ս. ՆԱՀԱՏԱԿՅԱՆ, Ժ.Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԾԱՂԿՈՒՆՔԻ ՍԲ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ՎԵՐԱԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Հետազոտության հիմք է հանդիսանում Սևան համայնքի Ծաղկունք գյուղի Սբ. Հարություն եկեղեցու վերականգնման նախագիծը, որին զուգահեռ առաջարկվում է նաև տեղական նշանակության հուշարձան շենքի վերաարժևորման հայեցակարգը: Նախագծի իրականացման փուլում առաջարկվել է վերականգնող ճարտարապետի գլխավորած մասնագիտական խմբում ինտեգրել նաև դիզայների:

Համալիր վերլուծությունների հիման վրա առաջարկվում է ինչպես նորարարական, այնպես էլ պահպանողական մեթոդներով իրականացնել մուտքի հանգույցը, տանիքը, ներքին որմերի հարդարանքը, ներքին կահավորումը, ինչպես նաև կառույցին հարող արտաքին միջավայրը: Ներկայացվող հայեցակարգային լուծումները չեն հակասում հուշարձանների պահպանման և շահագործման տեղական և միջազգային նորմերին ու չափորոշիչներին, իսկ համարձակ առաջարկները նոր շունչ կհաղորդեն դրանց պահպանմանը և վերաօգտագործմանը:

Առանցքային բաներ. Ծաղկունք, Սբ. Հարություն եկեղեցի, վերլուծություն, վերականգնում, վերաարժևորման հայեցակարգ, պահպանում:

Հետազոտության առարկան են Սևան համայնքի Ծաղկունք [1, էջ 101] գյուղի Սբ. Հարություն եկեղեցին և նրա վերականգնման նախագիծը, որին զուգահեռ առաջարկվում է նաև տեղական նշանակության հուշարձան շենքի [2] վերաարժևորման հայեցակարգը: Վերջինիս շրջանակներում փորձ է արվել, իրականացման փուլում, ճարտարապետ վերականգնողի գլխավորած մասնագիտական խմբում ինտեգրել նաև դիզայներ մասնագետի: 2021 թ-ից սկսվել է Ծաղկունքի եկեղեցու ամրակայման, վերականգնման և վերաարժևորման նախագիծը:

▪ Գլխավոր ճարտարապետ՝ ճարտ. թեկն. Դավիթ Նահատակյան, ճարտարապետներ՝ Հրաչյա Գասպարյան, Տաթև Քարտաշյան:

▪ Ինժեներներ՝ Անտոնիո Բասոլի, Սերոբ Գևորգյան

▪ ՀԱՊՀ Դիզայնի ամբիոնի մագիստրատուրայի ավարտական դիպլոմային աշխատանքի թեմա է հանդիսացել Ժաննա Բաղդասարյանի համար՝ պաշտպանել է 2023 թ.: Ղեկավար՝ Դ. Նահատակյան, Լ. Թոքմաջյան:

Հայկական միջնադարի ճարտարապետությունը ուշագրավ է եկեղեցական կառույցներով, որոնց մեջ առանձնահատուկ դեր ունեն Գեղարքունիքի մարզի ուշ միջնադարի և նոր շրջանի եկեղեցիները [3, էջ 375]: Այդ շրջանի համեմատաբար

լավ պահպանված և հետաքրքիր կառույցներից է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծաղկունք գյուղի կենտրոնական մասում պահպանված եկեղեցին: Համալիրը վերաօգտագործման արդյունքում կարող է դառնալ ներքին և արտաքին զբոսաշրջության համար հետաքրքիր կենտրոն, որը կներառի հոգևոր, մշակութային և կրթական բաղադրիչներ:

Սբ. Հարություն եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնական մասում: Կառուցման մասին պատմական տեղեկություններ գրեթե չեն պահպանվել [5]: Ըստ ճարտարապետական հորինվածքի և շինարարական տեխնիկայի՝ 19-րդ դարի գործ է [4, էջ 1-10]:

Արևմտյան պատին արտաքինից ագուցված է 2, իսկ հարավային պատին՝ 1 խաչքար, որոնք թվագրվում են 13-րդ դարով: Շատ հնարավոր է, որ տեղում եղած լինի ավելի հին շրջանի կառույց, որի տեղում 19-րդ դարում գաղթական բնակչության կողմից կառուցվել է ներկայիս եկեղեցին: Եկեղեցու հարավային մասի արևելյան կողմում պահպանվել է գերեզմանոց: Եկեղեցու առաջ կան 7 կանգուն խաչքարեր և մեկ տասնյակից ավելի գերեզմանաքարեր (10-19-րդ դդ.):

Արտաքրուստ ուղղանկյուն հատակագծով (չափերն են՝ 23,37x12,80մ) եռանավ բազիլիկ շինություն է, արևելյան մասում է գտնվում կիսաշրջանաձև խորանը, որի երկու կողմերում կան ավանդատներ: Խորանն աղոթասրահից անջատվում է բեմով, իսկ հյուսիսային պատի արևելյան մասում մկրտարանն է: Միակ մուտքը հարավային կողմից է: Գերանաձածկ տանիքը հենված է 3 զույգ փայտե սյուների վրա, վերջիններս ավարտվում են քանդակազարդ խոյակներով: Ծածկն արտաքինից երկթեք է, թիթեղապատ:

Կառույցի կոնստրուկտորական համակարգը լուծված է չմշակված խոշորաբեկոր, միջին և մանր բազալտե քարերից՝ կավահողային շաղախով: Տանիքածածկը երկլանջ է՝ այժմ թիթեղյա: Հատակն այժմ ցեմենտ-ավազե հարթեցված շերտով է իրականացված: Հարավային պատի վրա առկա դռան բացվածքը խորհրդային տարիների ընթացքում ձևափոխվել է. կառուցվել է երկաթ-բետոնից շրջանակ, և տեղադրվել են մետաղական դարպասներ:

Սբ. Հարություն եկեղեցին գտնվում է խիստ անմխիթար վիճակում, գրեթե բոլոր պատերին կան ճաքեր, ինչի հետևանքով ջուրը հոսում է ներս: Խորհրդային տարիներին եկեղեցին վերածվել է պահեստի, ինչի արդյունքում մուտքը մեծացվել է երկաթյա դարպասների տեղադրման հաշվին: Տարբեր հատվածներում առկա են փլուզման հետքեր, անբարեկարգ վիճակում է գտնվում եկեղեցու բակը, կան թեքված կամ ընկած խաչքարեր: Եկեղեցու ներսում պատի ծեփերը թափ-

ված են, գերանների վիճակը նույնպես անմխիթար է, հատակը՝ բետոնած է, վնասված:

Վերականգնող ճարտարապետի և ճարտարագետի ղեկավարությամբ նախատեսվում են իրականացնել պեղման աշխատանքներ, որոնց արդյունքում կբացվեն եկեղեցու հիմքերը: Այնուհետև անհրաժեշտ է հիմնովին վերականգնել եկեղեցին՝ իր նախնական ձևով, կարգի բերել եկեղեցու մուտքը՝ հեռացնելով երկաթյա դարպասներն ու վերաարժևորել շքամուտքը: Ներսում հարկավոր է իրականացնել մաքրման ու վերականգնման աշխատանքներ, նորոգել վնասված փայտե գերաններն ու ծածկերը, ամրակայել պատերի ծեփերը, պեղել հատակը, հասկանալ ապագա անելիքները, տեսքի բերել խորանի հատվածը: Կառույցը պահպանելու համար արդեն իսկ կատարվել են որոշակի ժամանակավոր ամրակայման աշխատանքներ:

Ճարտարապետադիզայներական մասով առաջարկվում է եկեղեցու ներքին բակի բարեկարգում, մուտքի վերակազմակերպում, հավաքվող մոդուլային բեմահարթակների կիրառություն, մոդուլային աթոռների կիրառություն, եկեղեցու արտաքին և ներքին լուսավորության ապահովում, պեղված նմուշների համար ցուցանակների, ստենդերի կիրառություն և գրաֆիկական ֆիրմային ոճի նախագծում:

Առաջարկվում է եկեղեցու բակի և ընդհանուր տարածքի ընդարձակում, որտեղ կունենանք ազատ և լայնարձակ միջավայր, կանաչ գոտի՝ գազոնային սալիկներով և բազալտե տուփանված քարերով պատված արահետով, կանաչ տանիք, նստարաններ, հասարակական սանհանգույցներ, համերգային միջոցառումների համար նախատեսված գովազդային և եկեղեցու մասին պատմող վահանակներ, գտածոների ցուցափեղկեր, ավտոկայանատեղի և գիշերային լուսարձակներ, իսկ գյուղացիների հողակտորների ցանկապատերը կփոխարինվեն էլեկտրական հովիվներով, որպեսզի բացառվի խոշոր և մանր եղջերավոր անասունների մուտքը եկեղեցու մերձակա տարածք:

Առաջարկվում է եկեղեցու պատերի ամրակայման աշխատանքներից հետո իրականացնել երկու տարբերակով տանիք՝ կանաչ կամ մետաղական: Կանաչ քանգի եկեղեցու տանիքն ի սկզբանե ունեցել է նմանատիպ լուծում: Կանաչ տանիքների օգտագործումը ժամանակակից ամենատարածված միտումներից մեկն է, և այս նախագծի շրջանակներում դրա կիրառությունը շեշտում է և՛ վերոնշյալ փաստը, և՛ նորարարական մոտեցում է ճարտարապետական վերականգնման և վերաօգտագործման ոլորտում: Մյուս տարբերակով կփոխարինվի տանիքի թիթեղյա ծածկը՝ նոր թիթեղով: Այս մեթոդների ընտրությունը թողնված է նախագծի վերջում:

Կանաչ տանիքի նախագծումը պետք է իրականացվի խոնավակլանիչ, հրակայուն և ջերմամեկուսիչ նյութերի կիրառմամբ: Տանիքի նախնական կառուցվածքային առաջարկում նախատեսվում է հանել հին և անպիտան տախտակները, փոխարինել նորերով, ապա ավելացնել ևս մեկ շերտ փայտյա տախտակներից: Դրանից հետո օգտագործել խոնավապաշտպան մեմբրանի, պեռլիտի կամ կերամզիտի, կավահողի և ճիմի վերջնական շերտերը (տես՝ Հավելված):

Մուտքի հանգույցի համար ընտրվել է մետաղական եզրագոտիով շեշտված երկակի երկփեղկ դռների կիրառությունը: Մետաղական եզրագոտին, ճարտարապետական վերականգնումից հետո, հանդիսանում է դռան հանգույցի ամրագոտի և շեշտում է կատարված նորարարական միջամտությունը: Հիմնական դուռը փայտյա է, պահպանում է գյուղական միջավայրի ընդհանուր ճարտարապետական ոճը, ինչպես նաև հիանալի կերպով ծուլվում է գյուղական միջավայրին: Երկրորդական դուռն իրականացված է երկաթյա շրջանակներում օրգանական ապակիների կիրառմամբ, կրում է և՛ դեկորատիվ, և՛ ֆունկցիոնալ կարևոր նշանակություն: Օրգանական ապակիները գունավոր են, շեշտում են մուտքի հանդիսավորությունը, եկեղեցին հոգևոր-մշակութային միջոցառումների անցկացման վայր դարձնելու կարևոր նպատակը: Օրգանական ապակիների փոխարեն կօգտագործվեն նաև Ծաղկունք գյուղի մշակութային դպրոցի սաների կատարած վիտրաժային աշխատանքները: Մետաղական եզրագոտու վրա կկիրառվեն լեդ լուսարձակներ, որոնք կապահովեն թեթև ֆոնային լուսավորություն՝ մթության մեջ շեշտելով մուտքի համար կատարված միջամտությունը:

Եկեղեցու ինտերիերի ընդհանուր մակերեսը կազմում է մոտավորապես 235մ²: Մշակվել է եկեղեցու սրահում մշակութային միջոցառումների անցկացման համար նախատեսված համերգասրահի կահավորման երկու տարբերակ: Բեմահարթակը մոդուլային հավաքվող բնույթի է: Բեմահարթակի դեպի խորան դասավորության դեպքում եկեղեցու սրահը կարող է հյուրընկալել 42, իսկ դեպի հյուսիսային ճակատի դեպքում՝ 44 հոգու: Առաջին կահավորման տարբերակն ընտրվել է որպես հիմնական տարբերակ: Կահավորման համար ընտրված աթոռները կիրառված են երեքական, երկուական կամ մեկական դասավորությամբ և ապահովում են բեմահարթակի համար անհրաժեշտ տեսանելիությունը: Աթոռների նստատեղի և թիկնակի վերնածածկի գույնի ընտրությունը կարող է փոփոխվել՝ ըստ կազմակերպվող միջոցառման բնույթի:

Համաշխարհային պատմաճարտարապետական ժառանգության պահպանման ոլորտում այս ուղղությունը վերջերս դարձել է բավականին արդիական, և բազմաթիվ երկրներում փորձեր են արվում դիզայներներին ներգրավելու այս-

պիսի աշխատանքներում: Միջազգային փորձի ուսումնասիրության ընթացքում ակնհայտ է դարձել, որ կրոնական կառույցների մեծ մասը դեմ է արտահայտվում եկեղեցու տարածքը, բացի հոգևորից, այլ նշանակությամբ կիրառելուն: Չնայած նմանատիպ մոտեցմանը, արդի աշխարհում եկեղեցիները վերաօգտագործվում են որպես գրադարաններ, սրճարաններ, միջոցառումների անցկացման վայրեր և այլն: Անհրաժեշտ է առավել հետաքրքիր կերպով ներկայացնել անցյալի ժառանգությունը միջազգային հանրությանը և մեր ազգաբնակչությանը:

Եզրակացություն: Պատմամշակութային ժառանգության վերականգնման և վերաարժևորման գործում կարող է մեծ ավանդ ունենալ նաև դիզայների մասնակցությունը, որն ակնհայտորեն երևում է վերոնշյալ հետազոտության մեջ: Մասնագիտական խմբում աշխատելով՝ դիզայներն առաջ է քաշում վերաարժևորման թարմ և անկաշկանդ գաղափարներ, որից օգուտ են քաղում և մասնագիտական խումբը, և հուշարձանը:

Հավելված



Նկ. 1,2. Ծաղկունք գյուղի եկեղեցու հարավային ճակատը՝ լուսանկարը և առաջարկը



Նկ. 3,4. Տեսքը հարավ-արևմուտքից և առաջարկի եռաչափ մոդելը



Նկ. 5. Միջավայրի վերաարժևորման մանրակերպի լուսանկար

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ: - Երևան, 2008:
https://www.cadastre.am/storage/files/pages/pg_8945925618_pg_907871769_HH_bnak._bar..pdf (12.11.2023)
2. ՀՀ Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում.
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=37837> (12.11.2023)
3. **Հարությունյան Վ.Մ.** Հայ ճարտարապետության պատմություն.- Երևան, 1992:
4. **Երուանդ Լալայեան**, Նոր Բայազետի գաւառ կամ Գեղարքունիք («Ազգագրական հանդէս», Թիֆլիս, XVIII գիրք (1908) № 2, էջ 127-128, XX գիրք (1910) № 2, էջ 44:
<http://ethno.asj-oa.am/677/1/126.pdf>, (12.11.2023)
5. **Մեսրոպ արք. Սմբատեանց**, Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գավառի, Վաղարշապատ, 1895:

Д.С. НААТАКЯН, Ж.В. БАГДАСАРЯН

**АНАЛИЗ ИССЛЕДОВАНИЯ АРХИТЕКТУРНОЙ РЕВАЛОРИЗАЦИИ
ЦЕРКВИ СВ. АРУТЮНА В СЕЛЕ ЦАХКУНК**

Основой исследования является проект реставрации церкви Св. Арутюна, находящейся в селе Цахкунк Севанского региона РА. Параллельно предлагается концепция ревалоризации памятника местного значения. В рамках исследуемого предложено интегрировать дизайнера в группе специалистов во главе архитектора-реставратора.

На основе комплексных исследований предлагается как инновационными, так и с консервативными методами реализовать вход, крышу, отделку внутренних стен, внутреннюю меблировку, а также внешнюю среду церкви. Предложенные концептуальные решения не противоречат местным и международным нормам и стандартам консервации и эксплуатации памятников, а смелые решения дают новые веяния в сфере их консервации и переиспользования.

Ключевые слова: Цахкунк, церковь Св. Арутюна, анализ, реставрация, концепция ревалоризации, консервация.

D.S. NAHATAKYAN, Z.V. BAGHDASARYAN

**ANALYSIS OF THE STUDY OF ARCHITECTURAL REVALORIZATION
OF ST. HARUTYUN CHURCH IN TSAGHKUNK VILLAGE**

The research is based on the restoration project of St. Harutyun church in the village Tsaghkunk (Sevan region), parallelly, a local monument revalorization concept is proposed. It is proposed to integrate a designer to the group of specialists led by an architect-restorator during the project realization.

Based on the complex studies, it is proposed to use innovative, but at the same time conservative methods to accomplish the entrance, the roof, the inner wall plastering, the inner furnishing, and also the environment around the building. The conceptual solutions do not contradict the local and international norms and standards of conservation and exploitation of monuments and the proposals will innovate their conservation and reuse processes.

Keywords: Tsaghkunk, St. Harutyun Church, analysis, restoration, revalorization concept, conservation.